ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԵՐԹԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ

07.10.2021 16:55

2021թ. հոկտեմբերի 6-ին, ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել հերթական քննարկում-հանդիպումը:

Քննարկմանը մասնակցել են ՄԱԿ-ի փախստականների գործակալության իրավաբանական բաժնի ղեկավար՝ Անդրեյ Արյուպինը, ՀՀ Փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են արդեն իսկ առկա ծրագրերը, ինչպես նաև նախանշվել են ապագա համագործակցության հնարավորությունները:

Քննարկման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել փաստաբանների համար մշակել վերապատրաստման ծրագրեր՝ փախստականների իրավունքների պաշտպանության թեմատիկայի շրջանակներում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })